# ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 18.03.2013թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-16/13 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-16/13 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Կարկոմավտո» ՍՊԸ-ի կողմից 26.02.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-16/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. **<u>«Կարկոմավտո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Կարկոմավտո» ՍՊԸ-ն հայտնել է, որ «Կարկոմավտո» ՍՊԸ-ն 20.02.2013թ. մասնակցել է Գորիսի քաղաքապետարանի կողմից մարդատար ավտոմեքենայի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՍՄԳՔ-ՇՀԱՊՁԲ-11/21» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգին: Գնահատող հանձնաժողովի նիստին ներկա է գտնվել «Կարկոմավտո» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Արման Թադևոսյանը: Տվյալ ընթացակարգին մասնակցել է նաև «Կիա Մոթորս Արմենիա» ՓԲԸ-ն: Համաձայն

21.02.2013թ. թիվ 05/04-07 գրության, գնային առաջարկների ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ «Կարկոմավտո» ՍՊԸ-ի գնային առաջարկը եղել է 12810000 (տասներկու միլիոն ութ հարյուր տասը հազար) ՀՀ դրամ, իսկ մյուս մասնակից «Կիա Մոթորս Արմենիա» ՓԲԸ-ն առաջարկել է մարդատար ավտոմեքենա՝ 13900000 (տասներեք միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ արժեքով: Արդյունքում հաղթող է ճանաչվել «Կիա Մոթորս Արմենիա» ՓԲԸ-ն, որը ներկայացրել է ավելի թանկ գնային առաջարկ, քան «Կարկոմավտո» ՍՊԸ-ի գնային առաջարկը, իսկ վերջինիս հայտը մերժվել է՝ ներկայացված ավտոմեքենայի տեխնիկական հատկանիշները հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով: Ըստ «Կարկոմավտո» ՍՊԸ-ի նշված որոշումը կայացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ Կառավարության 2008թ. հուլիսի 24-ի թիվ 830 որոշման պահանջների խախտմամբ:

Մասնավորապես Գորիսի քաղաքապետարանը՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի ա) ենթակետի համաձայն, լիարժեք ձևով համարվում է պատվիրատու: Որպես այդպիսին, Գորիսի քաղաքապետարանը հրավերում սահմանելով ավտոմեքենայի տեխնիկական չափորոշիչներ, պարտավոր էր խստորեն հետևել ՀՀ Կառավարության 2008թ. հուլիսի 24-ի թիվ 830 որոշման պահանջներին, որոնց համաձայն, նույնիսկ ամենաբարձր՝ 1-ին, խմբում ներառված անձանց համար գնվելիք ավտոմեքենաներին ներկայացվող տեխնիկական պահանջները շատ ավելի նվազ են, քան նշված է հրավերում: Առավելագույն արժեքը սահմանված է 13000000 (տասներեք միլիոն) ՀՀ դրամ: Անհասկանալի է, թե ինչպես է «Կիա Մոթորս Արմենիա» ՓԲԸ-ն հաղթող ճանաչվել, եթե վերջինիս ներկայացված գնային առաջարկը էականորեն բարձր է ՀՀ կառավարության վերոգրյալ որոշմամբ նախատեսված առավելագույն չափից: Այսինքն, «Կիա Մոթորս Արմենիա» ՓԲԸ-ն՝ համաձայն ՀՀ կառավարության 2008թ. հուլիսի 24-ի թիվ 830 որոշման, չպետք է հաղթող ճանաչվեր նշված ընթացակարգում: Միաժամանակ «Կարկոմավտո» ՍՊԸ-ն նշել է նաև, որ հրավերում տեխնիկական բնութագրերը կազմվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի խախտմամբ: Մասնավորապես հիմնավորված չէ, թե ինչու ավտոմեքենան պետք է լինի կաշվեպատ սրահով և էլեկտրական լյուկ/պանորամայով: Ըստ էության, նշվածը համարժեք չէ համապատասխան կարիքին, ինչը սակայն միաժամանակ արհեստականորեն ավելացնում է ձեռք բերվելիք ավտոմեքենայի արժեքը: Ակնհայտ է, որ համալրման այս դրույթը հակասում և ուղղակիորեն խախտում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները:

Հաղթողը պետք է որոշվեր հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում հրավերի, որևէ գրության կամ նամակի մեջ չկա որևէ հղում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31 հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դրույթներին: Այսինքն, մրցույթ անցկացնողն իր հրավերում հստակ և սպառիչ ձևով սահմանել է հաղթողին որոշելու կարգը՝ նվազագույն գնային առաջարկին նախապատվություն տալու միջոցով, ինչն իր հերթին նշանակում է, որ օրենքով նախատեսված հաղթողին որոշելու այլ տարբերակ ի սկզբանե չպետք է կիրառվեր, քանի որ օրենքում այդ տարբերակներն առանձնանում են «կամ» բառով: Մասնավորապես խոսքը գնում է տեխնիկական որոշ չափանիշներին մեր ներկայացրած հայտի չհամապատասխանելու հիմնավորմանը, որը ի խախտումն հենց Գորիսի քաղաքապետարանի կողմից ներկայացրած հրավերի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31 հոդվածի 2-րդ կետի, ընդհանրապես անհիմն է և անօրինական: Ավելին գնահատող հանձնաժողովի 21.02.2013թ. գրության մեջ ընդանրապես որևէ նշում չկա այն մասին, թե ինչու հանձնաժողովը նախապես տրված հրավերում հաղթողի որոշման հստակ սահմանված կարգը չի կիրառել, այլ կիրառել է մեկ այլ սկզբունք, որն իր հիմնավորմամբ նույնիսկ, կրկին չի համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31 հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներին: Այսինքն, նույնիսկ այդ դեպքում պարզ չէ, թե դրամական արտահայտությամբ չափվող որ ոչ գնային չափանիշներն են հիմք ընդունվել և արդյոք այդ չափանիշներին տրվող գործակիցների հանրագումարից: «Կարկոմավտո» ՍՊԸ-ն կարծում է, որ որոշումն ընդունվել է կամայականորեն՝ խախտելով հրավերի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև ղեկավարվելով ընթացակարգի հրավերի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31, 45, 46 և 48 հոդվածների դրույթներով, «Կարկոմավտո» ՍՊԸ-ն խնդրել է ընդունել բողոքը քննության և դադարեցնել ու չեղյալ համարել Գորիսի քաղաքապետարանի կողմից անցկացված «ՍՄԳՔ-ՇՀԱՊՁԲ-11/21» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգը կամ նշված գնման ընթացակարգի արդյունքում որպես հաղթող ճանաչել «Կարկոմավտո» ՍՊԸ-ին՝ որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, համաձայն գնման հրավերի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ կետի պայմանների:

2. **<u>Գորիսի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>**.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 11.03.2013թ. N 06/032-400 գրությամբ դիմել է Գորիսի քաղաքային համայնքին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 26.02.2013թ. «Կարկոմավտո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

Գորիսի քաղաքային համայնքը 11.03.2013թ. N 1851-Մ գրությամբ «Կարկոմավտո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ «Կարկոմավտո» ՍՊԸ-ի բողոքը կապված «ՍՄԳՔ-ՇՀԱՊՁԲ-11/21» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հետ անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ հիմնավորումներով.

Բողոք բերողը իր բողոքում վկայակոչում է ՀՀ կառավարության 24.07.2008թ. N 830-Ն որոշումը և պնդում, որ Գորիսի քաղաքապետարանը խախտել է այն:

Նշված որոշումը տարածվում է ՀՀ պետական մարմինների, պետական հիմնարկների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների վրա:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածում հստակ գրված է, որ տեղական ինքնակառավարման մարմինները պետական կառավարման մարմինների մասը չեն: ՏԻՄ-երը գնումները կատարում են համայնքի բյուջեի հաշվին, որը հաստատում է համայնքի ավագանին («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ, 34-րդ, 50-րդ և 54-րդ հոդվածներ»):

Փաստորեն, ՀՀ կառավարության 24.07.2008թ. N 830-Ն որոշումը չի տարածվում տեղական ինքնակառավարման մարմինների վրա, հետևաբար Գորիսի քաղաքապետարանի կողմից ՀՀ կառավարության 24.07.2008թ. N 830-Ն որոշումը չէր կարող խախտվել:

Գորիսի քաղաքապետարանը գտնում է, որ բողոքն այդ հիմքով անհիմն է և ենթակա է մերժման:

Բողոք բերողը նշել է նաև, որ հրավերում նշված տեխնիկական բնութագիրը կազմվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի, մասնավորապես 12-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի խախտմամբ:

Գնման ենթակա ավտոմեքենան նախատեսվել է Գորիսի համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքի 2013թ. բյուջեով և գնումների պլանով, և նախատեսված

գումարի շրջանակներում էլ պատասխանատու ստորաբաժանումը կազմել է տեխնիկական բնութագիրը՝ փորձելով ամբողջությամբ և հստակ նկարագրել ձեռքբերվող ապրանքի հատկանիշները:

Բացի այդ, Գորիսի քաղաքապետարանը ապակենտրոն համագործակցության շրջանակներում ունի համագործակցության հուշագրեր Ֆրանսիայի Վիեն և Բելոռուսի Նեսվիժ քաղաքների հետ, որի արդյունքում իրականացվում են փոխադարձ պաշտոնական այցելություններ, և ձեռքբերվող ավտոմեքենան բացի ծառայողական լինելուց պետք է ծառայի նաև ներկայացուցչական նպատակներով: Ուստի մեքենայի տեխնիկական բնութագրում մասնավորապես բողոքում նշված կաշվեպատ սրահը և էլեկտրական լյուկ/պանորամայով չափանիշը, սահմանվել է, հաշվի առնելով վերոնշյալը և Գորիսի քաղաքապետարանը գտնում է, որ նշված չափանիշի սահմանումը օբյեկտիվորեն սահմանված է և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպտակով կատարվում է տվյալ գնումը:

Հետևաբար Գորիսի քաղաքապետարանը գտնում է, որ պատվիրատուի կողմից պահպանվել են «Գնումների մասին» ՀՀ օրնքի 12-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջները, և բողոքն այս հիմքով նույնպես անհիմն է և ենթակա է մերժման:

Գորիսի քաղաքապետարանը նշել է նաև, որ «Կարկոմավտո» ՍՊԸ-ի կողմից առաջարկած ավտոմեքենայի տեխնիկական բնութագիրը, բացի բողոքում նշված կաշվեպատ սրահը և էլեկտրական լյուկ/պանորամայով չափանիշից՝ չի համապատասխանում տեխնիկական բնութագրով սահմանված մի շարք չափանիշներին:

Բողոքաբեր կազմակերպությունը, անհասկանալի է, թե ինչու անընդհատ վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասը՝ պնդելով, որ հաղթողը պետք է որոշվեր հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, մինչդեռ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասով հստակ սահմանված է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է, բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագոյն գնային առաջարկ ներկայացված մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Բողոքաբեր կազմակերպությունը նշել է, որ հրավերի որևէ գրության կամ նամակի մեջ չկա որևէ հղում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դրույթներին, ինչպես նաև մրցույթն անցկացողն իր հրավերում հստակ և

սպառիչ ձևով սահմանել է հաղթողին որոշելու կարգը, այն է՝ նվազագույն գնային առաջարկին նախապատվություն տալը, ինչն էլ իր հերթին նշանակում է, որ օրենքով նախատեսված հաղթողին որոշելու այլ տարբերակ ի սկզբանե չպետք է կիրառվեր, քանի որ օրենքում այդ տարբերակներն առանձնացվում են «կամ» բառով: Այս կապակցությամբ բողոքաբեր կազմակերպությունը հայտնել է, որ խոսքը գնում է տեխնիկական որոշ չափանիշներին վերջինիս ներկայացրած հայտի չհամապատասխանելու հիմնավորմանը, որը ի խախտումն հենց Գորիսի քաղաքապետարանի կողմից ներկայացրած հրավերի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի, ընդհանրապես անհիմն է և անօրինական: Ավելին, գնահատող հանձնաժողովի 21.02.2013թ. գրության մեջ ընդհանրապես, որևէ նշում չկա այն մասին, թե ինչու հանձնաժողովը նախապես տրված հրավերում հաղթողի որոշման հստակ սահմանված կարգը չի կիրառել, այլ կիրառել է մեկ այլ սկզբունք, որը պատվիրատուի հիմավորմամբ նույնիսկ կրկին չի համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջներին: Այսինքն, նույնիսկ տվյալ դեպքում պարզ չէ, թե դրամական արտահայտությամբ չափվող ոչ գնային չափանիշներն են հիմք ընդունվել և արդյոք այդ չափանիշներին տրվող գործակիցների հանրագումարը ավելի բարձր է եղել ընկերության հայտի նմանատիպ մեթոդով հաշվարկված հանրագումարից:

Ելնելով վերոգրյալից բողոքաբեր ընկերությունը կարծիք է ձևավորել, որ գնահատող հանձնաժողովը որոշումն ընդունել է կամայականորեն՝ խախտելով հրավերի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները:

Գորիսի քաղաքապետարանը գտնում է, որ բողոքն այս հիմքով նույնպես անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ հիմավորումներով.

Գորիսի քաղաքապետարանի կողմից նշված ընթացակարգին մասնակցելու նպատակով բողոքաբեր կազմակերպությանը ուղղարկված ծանուցման մեջ հստակ նշված է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/21» ընթացակարգի շրջանակներում ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի քաղաքապետարանի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու նախատեսված ապրանքը և հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/21» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով: Այսինքն, բողոքաբեր կազմակերպությունը, եթե ուսումնասիրեր «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/21» ծածկագրով հրավերը, կտեսներ, որ նույն հրավերով սահմանված է ոչ միայն մասնակիցների կողմից հայտերի ներկայացման կարգը, այլ նաև մասնակիցներին ուղարկվող ծանուցման օրինակելի ձևը, հայտերը գնահատելու կարգը և այլն:

Նույն հրավերի նախաբանում նշված է հետևյալը.

«Հարգելի մասնակից, նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման»:

Հրավերի «Բովանդակությունը» բաժնում նշված է, որ նույն հրավերը կազմվել է գնումների մասին օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետև՝ Կարգ) և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի.

1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

2-րդ մասի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

2) այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է: Այս մեթոդի կիրառման դեպքում հայտերը գնահատելիս, հրավերով սահմանած դեպքերում և կարգով, առաջարկվող գնից բացի հաշվի են առնվում ոչ գնային այլ չափանիշներ, որոնք հնարավոր է չափել դրամական արտահայտությամբ: Ոչ գնային չափանիշները պետք է փոխկապակցված լինեն պայմանագրի առարկայի հետ և դրանց հարաբերական կշիռները ներկայացվեն հրավերի մեջ:

Հրավերի 7.2 կետով հստակ սահմանված է, որ հայտերի բացման նիստում հանձնաժողովի կողմից որոշվում և հայտարարվում են ընտրված և երկրորդ ու երրորդ տեղերը զբաղեցրած մասնակիցները: Հաղթողը՝ ընտրված Մասնակիցը, որոշվում է հրավերին (ծանուցման) համապատասխանող հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝

նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, ընդ որում, հանձնաժողովի կողմից ընտրված և 2-րդ ու 3-րդ տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս՝ գնային առաջարկների համեմատումն իրականացվում է առանց նույն հրավերի 2-րդ մասի 3.3 կետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Այսինքն, բողոքաբեր կազմակերպության այն պնդումը, որ պատվիրատուի կողմից մասնակցի հայտը գնահատելու և հաղթող որոշելու կարգը հրավերով սահմանված չի եղել, անհիմն է:

Բողոքաբեր կազմակերպության կարծիքի վերաբերյալ, որ գնահատող հանձնաժողովը բողոքաբեր կազմակերպության հայտը մերժելու որոշումն ընդունել է կամայականորեն՝ խախտելով հրավերի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները, Գորիսի քաղաքապետարանը գտնում է, որ հիմնազուրկ է, քանի որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/21» ծածկագրով հրավերում ինչպես նաև ընթացակարգի ծանուցմամբ չի սահմանվել մասնակցի հայտը ոչ գնային պայմաններով գնահատման կարգ կամ մեթոդ և գնահատող հանձնաժողովը ընթացակարգի մասնակիցների, այդ թվում՝ բողոքաբեր կազմակերպության հայտը, գնահատել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի 1-ին կետով և Հրավերի 7.2 կետով սահմանված պահանջներին համապատասխան:

Այսպիսով, Գորիսի քաղաքապետարանը գտնում է, որ ներկայացված բողոքն անհիմն է և գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է այն ամբողջությամբ մերժել:

Նաև նշում է, որ անգործության ժամկետ է սահմանվել ս.թ. փետրվարի 22-ից 26-ը ներառյալ և 27.02.2013թ. Գորիսի քաղաքապետարանի և նույն ընթացակարգի արդյունքներով հաղթող ճանաչված «Կիա Մոթորս Արմենիա» ՓԲԸ-ի միջև կնքվել է «ՍՄԳՔ-ՇՀԱՊՁԲ-11/21» ավտոմեքենայի գնման պայմանագիր:

«Կիա Մոթորս Արմենիա» ՓԲԸ-ն 27.02.2013թ. իրականացրել է պայմանագրով նախատեսված ավտոմեքենայի մատակարարումը, կազմվել է հանձնման-ընդունման արձանագրություն և նույն օրը Գորիսի քաղաքապետարանի կողմից վճարվել է պայմանագրով նախատեսված ապրանքի ողջ գումարը:

**3. ԳԲԽ-16/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է «Կարկոմավտո» ՍՊԸ-ի կողմից 26.02.2013թ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը մերժել:

**4. ԳԲԽ-16/13 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-16/13 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.**

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Կարկոմավտո» ՍՊԸ-ի (այսուհետև՝ նաև Ընկերություն) կողմից 26.02.2013թ. ներկայացված բողոքը, «ՍՄԳՔ-ՇՀԱՊՁԲ-11/21» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետև՝ նաև Հրավեր), «ՍՄԳՔ-ՇՀԱՊՁԲ-11/21» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 20.02.2013թ. ժամը 17:00 N 2 արձանագրությունը, Գորիսի քաղաքապետարանի կողմից (այսուհետև՝ նաև Պատվիրատու) Կենտրոնին հասցեագրված 11.03.2013թ. N 1851-Մ գրությունը, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

Գորիսի քաղաքապետարանի կողմից մարդատար ավտոմեքենայի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՍՄԳՔ-ՇՀԱՊՁԲ-11/21» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետև՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Կարկոմավտո» ՍՊԸ-ն և «Կիա Մոթորս Արմենիա» ՓԲԸ-ն:

«ՍՄԳՔ-ՇՀԱՊՁԲ-11/21» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.02.2013թ. կայացած նիստի N 2 արձանագրության 1.5 կետով արձանագրվել է, որ «Կարկոմավտո» ՍՊԸ-ի առաջարկած գնման առարկայի տեխնիկական հատկանիշների համապատասխանությունը գնահատվել է անբավարար:

1. «Կարկոմավտո» ՍՊԸ-ն Կենտրոնին ներկայացրած բողոքով հայտնել է, որ Գորիսի քաղաքապետարանը հրավերում սահմանելով ավտոմեքենայի տեխնիկական չափորոշիչներ, պարտավոր էր խստորեն հետևել ՀՀ Կառավարության 2008թ. հուլիսի 24-ի թիվ 830 որոշման պահանջներին, որոնց համաձայն, նույնիսկ ամենաբարձր՝ 1-ին, խմբում ներառված անձանց համար գնվելիք ավտոմեքենաներին ներկայացվող տեխնիկական պահանջները շատ ավելի նվազ են, քան նշված է հրավերում: Առավելագույն արժեքը սահմանված է 13000000 (տասներեք միլիոն) ՀՀ դրամ: Անհասկանալի է, թե ինչպես է «Կիա Մոթորս Արմենիա» ՓԲԸ-ն հաղթող ճանաչվել, եթե վերջինիս ներկայացված գնային առաջարկը էականորեն բարձր է ՀՀ Կառավարության վերոգրյալ որոշմամբ նախատեսված առավելագույն չափից: Այսինքն, «Կիա Մոթորս Արմենիա» ՓԲԸ-ն՝ համաձայն ՀՀ Կառավարության 2008թ. հուլիսի 24-ի թիվ 830 որոշման, չպետք է հաղթող ճանաչվեր նշված ընթացակարգում:

Գորիսի քաղաքապետարանը 11.03.20213թ. N 1851-Մ գրությամբ հայտնել է, որ բողոքաբերը իր բողոքում վկայակոչել է ՀՀ կառավարության 24.07.2008թ. N 830-Ն որոշումը և պնդել, որ Գորիսի քաղաքապետարանը խախտել է այն, մինչդեռ նշված որոշումը տարածվում է ՀՀ պետական մարմինների, պետական հիմնարկների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների վրա:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածում հստակ գրված է, որ տեղական ինքնակառավարման մարմինները պետական կառավարման մարմինների մասը չեն: ՏԻՄ-երը գնումները կատարում են համայնքի բյուջեի հաշվին, որը հաստատում է համայնքի ավագանին («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ, 34-րդ, 50-րդ և 54-րդ հոդվածներ»): ՀՀ Կառավարության 2008թ. հուլիսի 24-ի թիվ 830 որոշումը չի տարածվում տեղական ինքնակառավարման մարմինների վրա, հետևաբար Գորիսի քաղաքապետարանի կողմից չէր կարող խախտվել այն:

**1-ին կետի վերաբերյալ.**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի ա. ենթակետի համաձայն՝ պատվիրատու են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, պետության կամ համայնքների հիմնարկները:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ համայնքը բնակիչների հանրություն և վարչատարածքային միավոր է, որի սահմաններում համայնքի բնակիչներն ուղղակիորեն կամ օրենքով սահմանված ընտրովի մարմինների միջոցով իրականացնում են տեղական ինքնակառավարում, համայնքն իրավաբանական անձ է, իսկ 7-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմիններն են համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները պետական կառավարման մարմինների մասը չեն:

ՀՀ կառավարության 24.07.2008թ. N 830-Ն որոշման 1-ին կետով հաստատվել են Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, պետական հիմնարկների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների ծառայողական (բացառությամբ պաշտոնատար անձանց կամ աշխատողների սպասարկման համար չնախատեսված հատուկ նշանակության) ավտոմեքենաների առանձին չափորոշիչները:

Գտնում ենք, որ թեև Գորիսի քաղաքապետարանը Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի ա) ենթակետի համաձայն հանդիսանում է պատվիրատու, այդուհանդերձ ՀՀ կառավարության 24.07.2008թ. N 830-Ն որոշման դրույթները չեն տարածվում Գորիսի քաղաքապետարանի նկատմամբ, քանի որ նշված որոշման որևէ կետով և որոշմամբ հաստատված հավելվածի որևէ խմբում սահմանված չէ տեղական ինքնակառավարման մարմինների համար գնման ենթակա ծառայողական ավտոմեքենաների չափորոշիչներին վերաբերող որևէ պահանջ և «Կարկոմավտո» ՍՊԸ-ի այն պնդումը, թե վերը նշված որոշման դրույթները տարածվում են Գորիսի քաղաքապետարանի նկատմամբ, անհիմն է:

Գտնում ենք, որ բողոքն այս հիմքով անհիմն է:

**2.** Բողոքաբեր կազմակերպությունը հայտնել է, որ հրավերում նշված տեխնիկական բնութագրերը կազմվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի խախտմամբ՝ մասնավորապես հիմնավորված չէ, թե ինչու ավտոմեքենան պետք է լինի կաշվեպատ սրահով և էլեկտրական լյուկ/պանորամայով: Ըստ էության, նշվածը համարժեք չէ համապատասխան կարիքին, ինչը սակայն միաժամանակ արհեստականորեն ավելացնում է ձեռք բերվելիք ավտոմեքենայի արժեքը՝ համալրման այդ դրույթը հակասում և ուղղակիորեն խախտում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները:

**2-րդ կետի վերաբերյալ.**

Պատվիրատուն Կենտրոնին հասցեագրված 11.03.2013թ. N 1851-Մ գրությամբ հայտնել է, որ գնման ենթակա ավտոմեքենան նախատեսվել է Գորիսի համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքի 2013թ. բյուջեով և գնումների պլանով և նախատեսված գումարի շրջանակներում էլ պատասխանատու ստորաբաժանումը կազմել է տեխնիկական բնութագիրը՝ փորձելով ամբողջությամբ և հստակ նկարագրել ձեռքբերվող ապրանքի հատկանիշները: Պատվիրատուն հայտնել է նաև, որ Գորիսի քաղաքապետարանը ապակենտրոն համագործակցության շրջանակներում ունի համագործակցության հուշագրեր Ֆրանսիայի Վիեն և Բելոռուսի Նեսվիժ քաղաքների հետ, որի արդյունքում իրականացվում է փոխադարձ պաշտոնական այցելություններ և ձեռքբերվող ավտոմեքենան բացի ծառայողական լինելուց պետք է ծառայի նաև ներկայացուցչական նպատակներով: Ուստի մեքենայի տեխնիկական բնութագրում, մասնավորապես բողոքում նշված կաշվեպատ սրահը և էլեկտրական լյուկ/պանորամայով չափանիշը, սահմանվել է՝ հաշվի առնելով վերոնշյալը և Գորիսի քաղաքապետարանը գտնում է, որ նշված չափանիշի սահմանումը օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Գորիսի քաղաքապետարանը Կենտրոնին ներկայացրել է առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության մասին Բելոռուսիայի Հանրապետության Մինսկի մարզի Նեսվիժսկի շրջանի և Հայաստանի Հանրապետության Գորիս քաղաքի միջև 2008թ. դեկտեմբերին կնքված համաձայնագրի և Վիեն/Ֆրանսիա և Գորիս/Հայաստան քաղաքների միջև 13.12.2012թ. կնքված ապակենտրոնացված համագործակցության արձանագրության պատճենները:

Բելոռուսիայի Հանրապետության Մինսկի մարզի Նեսվիժսկի շրջանի և Հայաստանի Հանրապետության Գորիս քաղաքի միջև 2008թ. դեկտեմբերին կնքված համաձայնագրի 6-րդ հոդվածով սահմանվել է, որ կողմերը իրականացնում են փորձի փոխանակում, տեղերում արդյունավետ գործող արտադրություններ ստեղծելու՝ գյուղատնտեսական արտադրանքը վերամշակելու համար:

Նույն համաձայնագրի 9-րդ հոդվածով սահմանվել է, որ Կողմերը հիմնվելով որոշակի պայմանավորվածությունների վրա, իրագործում են մասնագետների փոխանակում և

կազմակերպում են ստաժավորում, նպատակ ունենալով ուսումնասիրել կողմերի փորձը հատկապես արտադրության յուրահատուկ կազմակերպման և ներքին տնտեսագիտական գործունեության պայմանների վերաբերյալ:

Համաձայնագրի 10-րդ հոդվածով սահմանվել է, որ Կողմերը ցուցադրում են աջակցություն՝ փորձի փոխանակման, հետազոտման արդյունքներին, հրապարակումներին, գիտատեխնիկական և այլ բովանդակություն ունեցող ինֆորմացիային, անց են կացնում ընդհանուր սեմինարներ, սիմպոզիումներ, կոնֆերանսներ:

Վիեննն/Ֆրանսիա և Գորիս/Հայաստան քաղաքների միջև 13.12.2012թ. կնքված ապակենտրոնացված համագործակցության արձանագրությամբ սահմանվել է, որ քաղաքների կողմից ներկայացված ծրագրերը հիմք են ընձեռում Վիեննն և Գորիս քաղաքներում դերակատարում ունեցող մարմինների հետ խորհրդակցմանը/ձեռնարկություն, հասարակական կազմակերպություն և քաղաքացիներ, իսկ նախաձեռնությունների փոխլրացման փնտրտուքն իրականացվում է Վիեննի և Գորիսի տեղական, ռեգիոնալ, ազգային և միջազգային գործընկերների հետ համատեղ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Գտնում ենք, որ Գորիսի քաղաքապետարանի կողմից ընթացակարգի հրավերում՝ տեխնիկական բնութագրում, կաշվեպատ սրահով և էլեկտրական լյուկ/պանորամայով ձեռք բերման ենթակա ավտոմեքենայի սահմանումը օբյեկտիվորեն հիմնավորված է և համապատասխանում է այն կարիքին, որի բավարարման նպատակով կազմակերպվել է տվյալ գնումը:

Գտնում ենք, որ բողոքն այս հիմքով անհիմն է:

**3.** Բողոքաբեր կազմակերպությունը հայտնել է, որ Ընթացակարգի հաղթողը պետք է որոշվեր հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում հրավերի, որևէ գրության կամ նամակի մեջ չկա որևէ հղում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31 հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դրույթներին: Այսինքն, մրցույթ անցկացնողն իր հրավերում հստակ և սպառիչ ձևով սահմանել է հաղթողին որոշելու կարգը՝ նվազագույն գնային առաջարկին նախապատվություն տալու միջոցով, ինչն իր հերթին նշանակում է, որ օրենքով նախատեսված հաղթողին որոշելու այլ տարբերակ ի սկզբանե

չպետք է կիրառվեր, քանի որ օրենքում այդ տարբերակներն առանձնանում են «կամ» բառով: Մասնավորապես խոսքը գնում է տեխնիկական որոշ չափանիշներին «Կարկոմավտո» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի չհամապատասխանելու հիմնավորմանը, որը ի խախտումն հենց Գորիսի քաղաքապետարանի կողմից ներկայացրած հրավերի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31 հոդվածի 2-րդ կետի, ընդհանրապես անհիմն է և անօրինական: Ավելին գնահատող հանձնաժողովի 21.02.2013թ. գրության մեջ ընդանրապես որևէ նշում չկա այն մասին, թե ինչու հանձնաժողովը նախապես տրված հրավերում հաղթողի որոշման հստակ սահմանված կարգը չի կիրառել, այլ կիրառել է մեկ այլ սկզբունք, որն իր հիմնավորմամբ նույնիսկ, կրկին չի համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31 հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներին:

Այսինքն, նույնիսկ այդ դեպքում պարզ չէ, թե դրամական արտահայտությամբ չափվող որ ոչ գնային չափանիշներն են հիմք ընդունվել և արդյոք այդ չափանիշներին տրվող գործակիցների հանրագումարը ավելի բարձր է եղել «Կարկոմավտո» ՍՊԸ-ի հայտի նմանատիպ մեթոդով հաշվարկված հանրագումարից: «Կարկոմավտո» ՍՊԸ-ն գտնում է, որ որոշումն ընդունվել է կամայականորեն՝ խախտելով հրավերի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները:

Պատվիրատուն Կենտրոնին հասցեագրված 11.03.2013թ. N 1851-Մ գրությամբ հայտնել է, որ բողոքաբեր կազմակերպությունն իր բողոքում անհասկանալիորեն անընդհատ վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասը՝ պնդելով, որ հաղթողը պետք է որոշվեր հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, մինչդեռ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասով հստակ սահմանված է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է, բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագոյն գնային առաջարկ ներկայացված մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Բողոքաբեր կազմակերպությունը նշել է, որ հրավերի որևէ գրության կամ նամակի մեջ չկա որևէ հղում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դրույթներին, ինչպես նաև մրցույթն անցկացողն իր հրավերում հստակ և սպառիչ ձևով սահմանել է հաղթողին որոշելու կարգը, այն է՝ նվազագույն գնային առաջարկին նախապատվություն տալը, ինչն էլ իր հերթին նշանակում է, որ օրենքով նախատեսված հաղթողին որոշելու այլ տարբերակ ի սկզբանե չպետք է կիրառվեր, քանի որ օրենքում այդ տարբերակներն առանձնացվում են «կամ» բառով: Այս կապակցությամբ

բողոքաբեր կազմակերպությունը հայտնել է, որ խոսքը գնում է տեխնիկական որոշ չափանիշներին վերջինիս ներկայացրած հայտի չհամապատասխանելու հիմնավորմանը, որը ի խախտումն հենց Գորիսի քաղաքապետարանի կողմից ներկայացրած հրավերի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի, ընդհանրապես անհիմն է և անօրինական:

Ավելին, գնահատող հանձնաժողովի 21.02.2013թ. գրության մեջ ընդհանրապես, որևէ նշում չկա այն մասին թե ինչու հանձնաժողովը նախապես տրված հրավերում հաղթողի որոշման հստակ սահմանված կարգը չի կիրառել, այլ կիրառել է մեկ այլ սկզբունք, որը պատվիրատուի հիմավորմամբ նույնիսկ կրկին չի համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 2-կետի պահանջներին: Այսինքն, նույնիսկ տվյալ դեպքում պարզ չէ, թե դրամական արտահայտությամբ չափվող ոչ գնային չափանիշներն են հիմք ընդունվել և արդյոք այդ չափանիշներին տրվող գործակիցների հանրագումարը ավելի բարձր է եղել ընկերության հայտի նմանատիպ մեթոդով հաշվարկված հանրագումարից:

Ելնելով վերոգրյալից բողոքաբեր ընկերությունը կարծիք է ձևավորել, որ գնահատող հանձնաժողովը որոշումն ընդունել է կամայականորեն՝ խախտելով հրավերի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները՝ ուստի Գորիսի քաղաքապետարանը գտնում է, որ բողոքն այս հիմքով նույնպես անհիմն է և ենթակա է մերժման:

**3-րդ կետի վերաբերյալ.**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի.

- 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:
- 2-րդ մասի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

2) այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է: Այս մեթոդի կիրառման դեպքում հայտերը գնահատելիս, հրավերով սահմանած դեպքերում և կարգով,

առաջարկվող գնից բացի հաշվի են առնվում ոչ գնային այլ չափանիշներ, որոնք հնարավոր է չափել դրամական արտահայտությամբ: Ոչ գնային չափանիշները պետք է փոխկապակցված լինեն պայմանագրի առարկայի հետ և դրանց հարաբերական կշիռները ներկայացվեն հրավերի մեջ:

Հրավերի 7.2 կետով սահմանված է, որ հայտերի բացման նիստում հանձնաժողովի կողմից որոշվում և հայտարարվում են ընտրված և երկրորդ ու երրորդ տեղերը զբաղեցրած մասնակիցները: Հաղթողը՝ ընտրված Մասնակիցը, որոշվում է հրավերին (ծանուցման) համապատասխանող հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Այսինքն, Օրենքի 31-րդ հոդվածի և Հրավերի 7.2 ենթակետի վերլուծությունից պարզ է դառնում, որ ընթացակարգի հաղթողը՝ ընտրված մասնակիցը, հանդիսանում է հրավերին համապատասխանող հայտեր ներկայացրած մասնակիցների թվից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը, իսկ տվյալ դեպքում «Կարկոմավտո» ՍՊԸ-ի հայտը չի բավարարել ընթացակարգի հրավերի պահանջներին, որի արդյունքում գնահատող հանձնաժողովը 20.02.2013թ. ժամը 17:00 կայացած նիստի N 2 արձանագրության 1.5 կետով որոշում է կայացրել «Կարկոմավտո» ՍՊԸ-ի առաջարկած գնման առարկայի տեխնիկական հատկանիշների համապատասխանությունը գնահատել անբավարար:

Գտնում ենք, որ Հանձնաժողովի կողմից ընտրված մասնակից ճանաչելու որոշումը կայացվել է Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված պահանջների պահպանմամբ, քանի որ նախապատվություն է տրվել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին:

Գտնում ենք, որ բողոքն այս հիմքով անհիմն է:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասը գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Կարկոմավտո» ՍՊԸ-ի կողմից 26.02.2013թ. Կենտրոնին ներկայացված բողոքը մերժել:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Գոռ Ենոքյան

Անդամներ՝ Լիդիա Պողոսյան

Ռուդիկ Օրդյան